

(Առկ. 30, 34, 36), որոյ դարուն ճոխ տներու մէջ աւելի գործածական էին մըր-տի եւ վարդ (անդ, 28):

Գ. Գրիգոր վրդ. ուրիշ կարեւոր ման-րամասնութիւն մ'ալ կու տայ մեզ՝ որ այ-լուստ անձանօթ է: Նկարագրելով մեռնող մեծատան անցած խրախճանքը՝ կը ձայ-նարկէ. «Ո՛ւր ծխանկիքն անուշահոտը. ո՛ւր են խունկն եւ ո՛ւր են ծխանկիքն» (Ողբ): Ուրեմն այդ անուշահոտութիւնը կ'այրէին խնկանոցաց վրայ, եւ տաճա-րին օդը կ'ողողէին հեշտութեամբ. ինչպէս Գ դարուն կապաղովկացիք ալ կը գոր-ծածէին ճաշարանի մէջ «բուրո՛ւառս» (Նիւս. Հյր. ժԳ) կամ «խունկս» (Բրս. Արբ.):

Գ. Եւ որովհետեւ երեկոյ է եւ խաւա-րը վերահաս, պէտք էր նաեւ լուսաւորել ճաշատեղին: Առ այս անտարակոյս պիտի գտնենք հոն «ձրագ մի», որ սովորական էր «ի մեծի տան (հարկաւ հայ ազնուա-կանին՝) ի մէջ ձեղուան եւ յատակին լու-ցեալ», եւ զոր Եզնիկ կը համեմատէ ա-րեգական հետ (14, 158), աղով հասկացը-նելով մեզ՝ թէ այդ «ճրագ» կոչածը պայ-ծառ ջահ մ'էր, որով միայն պիտի կա-րենար «լուսատու լինել տան ի գիշերի» (158): Եւ այդքան պայծառ լինելու հա-մար՝ անշուշտ ստեղնաւոր էր, որոյ նը-